

Դր. Ռ. Անդրանիկյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՌՈՒԲԻԿԻ

ԹԵՎՖԻՔ ՖԻՔՌԵԹԻ

ԿՅԱԼՔՆ ՈՒ ՍՏԵՂԾՎԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ 01. 07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

## ԱՇԽԱԲԱՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Առենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ  
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԻԼԵՏԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր  
ԱՐՄԱՆԻՇ ԿՈԶՄՈՅԻ ԿՈԶՄՈՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ  
ՍՈՆԱ ԱԼԲԵՐՏԻ ՏՈՆԻԿՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

15/00

Պաշտպանությունը կայանալու է 2010թ. մայիսի 26-ին՝ ժամը 13<sup>30</sup>-ին,  
ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի 012 նախագիտական խորհրդի նիստում:

Դաստիճ Երևան, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի  
մասնաշենք, թիվ 202 լսարան:

Առենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2010թ. ապրիլի 21-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

Առենախոսությունը նվիրված է 19-րդ դարավերջին և հաջորդ դրամակարգին թուրք գրականության մեջ բացահայտ դեր կատարած ԹԱՖԻՔ Ֆիքրեթի (1867-1915) կյանքի ու ստեղծագործության քննությանը: Նա գրական մի ամբողջ շարժման՝ «Սերվեթի Փյունունի գրականության» պարագլուխն ու ամենաակնառու ներկայացուցիչներից էր: Այդ նշանավոր բանաստեղծի ստեղծագործական տարիներն անցել են սուլբան Արդուլ Համիդ Երկրորդի բռնապետական վարչակարգի՝ «զոլումի» ժամանակաշրջանում, այնուհետև՝ Երիտրութեթի տիրապետության օրոք: Թ. Ֆիքրեթի՝ համեմատաբար հանդուրժողական դիրքորոշումն արժանացել է կրոնանոյ ու ազգայնական գաղափարախոսների երեսն «Անդրուսամիտ»-արհամարհական, իսկ ավելի հաճախ՝ սուր քննադատական վերաբերմունքին: Վերջիններս էլ միաժամանակ անկարող էին չարձանագրել նրա ստեղծագործությունների գեղարվեստական բարձր ու մնայուն արժեքը:

Ուսումնասիրվել են Թ. Ֆիքրեթի կյանքի ուղին, գրական-գեղագիտական հյացքների համակարգն ու ստեղծագործական սկզբունքները: Դատուկ ուշադրություն է դարձվել «Սերվեթի Փյունունի գրականության» նշանակության ու բերած նորություններին՝ Օսմանյան կայսրության բաղաքական իրավիճակի, արդուլիամիտյան վարչակարգի և վերջինիս կողմից գրական միջավայրի վրա հաստատված գրաննության բացասական ազդեցության, ինչպես նաև թուրք մտավորականության՝ քաղաքացի-պետություն հարաբերությունների համապատկերում:

Այսուհետև փորձ է կատարվել արժևորել Թ. Ֆիքրեթի դերը թուրքական մշակույթի պատմության մեջ: Գոռող ներկայացվել է և իրեն ականավոր բանաստեղծ ու մանկագիր, և իրեն հմուտ խմբագիր ու կրակուտ հրապարակախոս, և իրեն կրթության ու դաստիարակության սուր հարցեր բարձրացնող առաջաեն մանկավայր:

Փորձ է արկել պարզաբանել նաև Օսմանյան կայսրության մայրամուտի փուլում թուրք «ազատական» մտավորականության, մասնավորապես Թ. Ֆիքրեթի աշխարհայցքի և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ նոր գաղափարների արտացոլման մոդուլը և նրա որոշ առանձնահատկությունները, վերլուծել գրողի՝ Երիտրության հեղաշրջման ազդեցությամբ գրված բանաստեղծությունները, նրա դիրքորոշումների շրջադարձայն փոփոխությունը՝ կապված վերոհիշյալ հեղաշրջման արդյունքներից հիմքափության հետ:

## ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն առենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հայ իրականության մեջ դեռևս կետազոտված չեն 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի թուրքական հասարակական ու գրական կյանքի զարգացման առանձնահատկություններն ու դրանց փոխապայմանա-

Վորվածության հարցերը: Պատշաճ լուսաբանված չեն նաև այդ շրջանի գրական մտքի ծևակորման հանրային-քաղաքական նախադրյալները:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն թեմայի տեսական հետաքրքրությամբ, այլև Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն որակավորմամբ թուրքագետ (օսմանագետ) բանասերների պատրաստման հրատապությամբ:

Սույն ատենախոսության նյութերն ու եզրակացությունները կարող են նպաստել թուրք գրականության տվյալ ժամանակաշրջանի մասին հայ թուրքագետ (օսմանագետ) գրականագետների, լեզվաբանների ու պատմաբանների հետագա հետազոտական աշխատանքների խթանմանը: Ատենախոսությունը նաև ուսումնամեթոդական արժեք կարող է ունենալ բարձրագույն կրթական հաստատություններում՝ «Սերվերի ֆյունումի գրականության» դասավանդման և հայ իրականության մեջ առաջին անգամ ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում ստեղծվող «Թուրք գրականության բուհական դասագրքի» համապատասխան հատորի, ինչպես նաև «Օսմաններենի դասագրքի» կազման աշխատանքների համար: Ատենախոսության թեման նաև համահունչ է ԵՊՀ-ի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Հայ-օսմանական առնությունների բաժնի հետազոտական ծրագրին:

## ՈՒՍՈՒՄԱՍՍԻՐՈՒԹՅԱՍ ԱՌԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Թևիքի Ֆիքրերի կյանքն ու ստեղծագործություններն են: Սույն ատենախոսության նպատակն է «Սերվերի ֆյունումի գրականության» և մասնավորապես Թևիքի Ֆիքրերի ստեղծագործությունների վերլուծությամբ ավելացնել թուրքական մշակույթի (մասնավորապես՝ գրականության) մասին գիտելիքների պաշարը հայ մասնագիտական դաշտում:

- Ատենախոսության մեջ առաջարկվել են հետևյալ խնդիրները՝
- գնահատել 19-րդ դարավերջի և հաջորդ դարասկզբի Օսմանյան կայսրության քաղաքական իրավիճակի առանձնահատկությունները, արդուիլամիոյան վարչակարգի և վերջինիս կողմից հաստատված գրաբնության ծայրահեղ բացասական ազդեցությունը գրական միջավայրի վրա, լուսաբանել թուրք մատավորականության որոնումները քաղաքացի-պետություն հարաբերություններում.
  - բացահայտել «Սերվերի ֆյունում» («Գիտելիքների հարատություն») հանդեսի և հանանուն գրականության առանձնահատկությունները, մասնավորապես թեմատիկ գերակայությունները.
  - հանգամանալից ներկայացնել Թևիքի Ֆիքրերի կյանքի ու ստեղծագործական ուղին, արժեքուն նրա դեռ թուրքական մշակույթի (ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ մամուլի ու կրթական հանակարգի) պատմության մեջ, մասնավորապես ներկայացնել Թևիքի Ֆիքրերին՝ իրու մանկագիր, խմբագիր, կրթության ու դաստիարակության սուր հարցեր բարձրացնող հրապարակախոսու ու մանկավարժ, ով բացահիկ երևույթ է օսմանյան մշակույթի պատմության մեջ.

- պարզաբանել Օսմանյան կայսրության մայրամուտի փուլում թուրք «ազատական» մտավորականության աշխարհայացքի և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ նոր գաղափարների արտացոլման մոդուլը և նրա որոշ առանձնահատկությունները:
- վերլուծել Թևիքի Ֆիքրերի՝ երիտրությական հեղաշրջման ազդեցությամբ գրված բանաստեղծությունները, նրա դիրքորոշումների շրջադարային փփոխությունը՝ կապված վերոհիշյալ հեղաշրջման արդյունքներից հիմքափության հետ:

## ԹԵՍԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թևիքի Ֆիքրերի պոեզիայի վերլուծության համար հիմնական աղբյուր են ծառայել նրա «Կոտրված քնար», «Ղալուքի տետրը», «Վերջին բանաստեղծությունները» և «Ծերմին» ժողովածուները<sup>1</sup>: Չահեկան են եղել նաև «Սերվերի ֆյունում» համեստի բնօրինակները, որոնց հնարապորտյուն է եղել ծանրուանու Գերմանիայի Յոհաննես Գուտենբերգի անվան համալսարանի արխիվներում:

Ֆիքրերի պոեզիային նվիրված աշխատություններում ուրույն տեղ է գրադեցնում թուրք գրականագետ Քենան Այրուզի «Թևիքի Ֆիքրեր» մենագրական ուսումնասիրությունը<sup>2</sup>: Բովանդակային առաւմով այն կարելի է համարել համեմատարար առավել ընդգրկուն աշխատություն: Գրքում ներկայացված են Ֆիքրերի կյանքն ու գրական գործունեությունը, բնմարկված են Ֆիքրերի գրական հյացքները, նրա չափածոյի լեզվական արվեստի, բառապաշատի, տաղաչափության հարցերը, ինչպես նաև երկերի բնամատիկ առանձնահատկությունները: Գրքում զետեղված են նաև Ֆիքրերի կողմից արված նկարներն ու գծագրությունները և ծեռագրերի լուսապատճենները:

Հարցի պատմության տեսակետից հիշարժան են թուրք գրականագետ Սեհմեր Քափիլանի ուսումնասիրությունները, որոնցից հատկապես առանձնանում է «Թևիքի Ֆիքրեր. դարաշրջանը, անհատականությունը, ստեղծագործությունը»<sup>3</sup> աշխատությունը: Յեղինակը նախ ընութագրում է մինչև «Սերվերի ֆյունումի գրականության» ընկած ժամանակաշրջանը, ապա՝ «Սերվերի ֆյունումի գրականության» ծևավորումն ու զարգացումը: Գրքում վերլուծության են ենթարկվում Թևիքի Ֆիքրերի երկերը՝ ըստ ժամանակահատվածների ու թեմաների: Առանձին բաժնում քննվում են Ֆիքրերի երկերի լեզվանական հարցերը: Թևիքի Ֆիքրերի պոեզիային և «Սերվերի ֆյունումի գրականությանը» նվիրված բազում աշխատությունների հեղինակ է թուրք

<sup>1</sup> Fikret Tevfik, Rübab-ı Şikeste (Hazırlayanlar: Dr. Abdullah Uçman ve Dr. Hasan Akay), Çağrı Yayımları, İstanbul, 2005, Halûk'un Defteri (Hazırlayan: Dr. Abdullah Uçman), Çağrı Yayımları, İstanbul, 2006, Son Şiirler (Hazırlayan: Cevdet Kudret), Varlık Yayınlari, 2. Basım, İstanbul, 1968, Sermin (Hazırlayanlar: Dr. Abdullah Uçman ve Şerife Ünlü Kurt), Çağrı Yayınlari, İstanbul, 2005.

<sup>2</sup> Akyüz Kenan, Tevfik Fikret, Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Yayınları, Ankara, 1947.

<sup>3</sup> Kaplan Mehmet, Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser, 10. Baskı, Dergah Yayınlari; İstanbul, 2007.

գիտական հսմակի Փարլարը: Ուշադրության է արժանի հեղինակի «Թևքիք Ֆիքրեթ» աշխատությունը<sup>4</sup>: Օգտագործել ենք նաև նույն հեղինակի այլ աշխատությունները ինչպես Ֆիքրեթի, այնպես էլ «Սերվեթի ֆյունունի գրականության» մյուս ներկայացուցիչների մասին: Իսկ որպես Թևքիքի աշխատությունների մասին աշխատությունը<sup>5</sup> աչքի է ընկնում Ֆիքրեթի կյանքի մանրամասնությունների նկարագրությամբ:

Առանձնահատուկ է թուրք լրագրող, հասարակական գործիչ ու հրապարակագիր Սարիհա Սերեթի՝ «Թևքիք Ֆիքրեթ. գաղափարախոսությունը և փիլիսոփայությունը» աշխատությունը<sup>6</sup>: Յատկանշական է, որ այս գործի համար Սերեթը Թուրքիայի իշխանությունների հրահրմանը կանգնել է դատարանի առջև, քանի որ Ֆիքրեթի հաճարայն-քաղաքական հայացըները անընդունելի են թյուրքականության գաղափարախոսների ու նրանց ազգայնամոլ հետևողմերի համար:

Թևքիք Ֆիքրեթի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրության տեսակետից առանձնանում են նաև թուրք այլ գրականագետ-քննադատների՝ Ահմետ Յամինի Թանգիրնարի, Խմակի Յիմբեթի, Շեմսեթին Քուրլուի, Մենեք Ֆուտարի և այլոց աշխատությունները:

«Սերվեթի ֆյունունի գրականության» խնդիրներով լրջորեն գրադվել են նաև խորհրդային արևելագետ-գրականագետները: Յարկ է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում Թևքիք Ֆիքրեթի մասին պաշտպանված միակ թեկնածուական աստենախոսությունն է Երեւան Ֆ. Ա. Սալիմյանովայի «Թևքիք Ֆիքրեթի քաղաքացիական լիրիկան» աշխատանքը<sup>7</sup>, որը, անշուշտ, գերծ չէ գաղափարախոսական կաղապարներից:

Ուստի և խորհրդային օսմանագիտության պատմության մեջ արժեքավոր տեղ են գրանցենում ակադեմիկոս Վլ. Գորդուևսկու աշխատությունները<sup>8</sup>: Օգտագործել ենք նաև Վ. Գորդուևսկու աշխատությունները<sup>9</sup>: Օգտագործել ենք նաև Վ. Գորդուևսկու աշխատությունները<sup>10</sup>: Ֆիքրեթի պոետիայի հարցերով գրադվել է նաև խորհրդային արևելագետ-գրականագետ Լ. Ալիկանը<sup>11</sup>: Յատկապես արժեքավոր նյութեր է պարունակում Ա. Տելյակովի մենագրություն՝ Ըլիլված 18-20-րդ դարավագրի Օսմանյան կայսրության գրահրատարակչական գործի պատմությանը<sup>12</sup>:

Օգտագործել ենք նաև պատմագիտական զանազան ուսումնասիրություններ, ինչպես թուրք հեղինակների (Է. Զ. Քարալի, Զ. Դանըշնամի, Ի. Դանիշ-

<sup>4</sup> Parlatır İsmail, Tevfik Fikret, Akçağ Yayınları, 1. Baskı, Ankara, 2004.

<sup>5</sup> Tevfik Rıza, Hayatı-Sanatı-Şahsiyeti, İnkılâp Kitabevi İstanbul, 1945.

<sup>6</sup> Sertel Sabiha, Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi, Yurt ve Dünya Yayınları, İstanbul, 1946.

<sup>7</sup> Салимзянова Ф. А., Гражданская лирика Тевфика Фикрета, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук, Академия Наук ССР, Институт Народов Азии, Москва, 1963.

<sup>8</sup> Гордлевский Вл. А., Очерки по новой османской литературе, Лазаревский Институт восточных языков, Вып. XXXIX, Москва, 1912, Гордлевский Вл. А., Избранные Сочинения, Том II, Язык и Литература, Москва, 1961.

<sup>9</sup> Гарбузова В. С., Поэты Турции XIX века, Ленинградский Университет, Ленинград, 1970.

<sup>10</sup> Фиш Р., Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, Фиш Р., Турецкие Дневники, Встречи. Размышления, Москва, 1977.

<sup>11</sup> Алькаева Л.О., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959.

<sup>12</sup> Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.), Москва, 1972.

մենի...»՝ տվյալ դարաշրջանին վերաբերող գործը, այնպես էլ գերմանացի (Ք. Քրայգերի...) ու խորհրդային պատմաբանների (Յու. Պետրոսյանի, Գ. Ալիկի, Վ. Շահլիկովյանի...) հետազոտությունները: Ժամանակաշրջանի հանրային-քաղաքական կյանքի և գրական մթնոլորտի ուսումնասիրության տեսակետից մեզ համար ուղենացին են եղել հայ արևելյագետների՝ երջանկահիշատակ Զոն Կիրակոսյանի և Մերի Քոչարի, ինչպես նաև ակադեմիկոս Յարշիկ Սիմոնյանի և պրոֆ. Ռուբեն Սաֆրասյանի աշխատությունները:

Թևքիք Ֆիքրեթի մասին ոչ միայն հայաստանյան, այլև սփյուռքահայ իրականության մեջ գիտական աշխատանք չի հրատարակվել: Աստենախությունը գրելիս օսմաններն բնագրից բարզմանվել, մեկնաբանվել և առաջին անգամ հայ ընթերցողին են ներկայացվել Թևքիք Ֆիքրեթի մի շարք ստեղծագործությունները:

## ԱՇԽԱՏԱՍՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՍԱԿԱՎԱՆ ՐԻՄՔԸ

Աշխատանքը կատարված է գրականության տեսության ուսումնասիրման մեթոդներով ու սկզբունքներով: Այն շարադրվել է համեմատական մեթոդով և տիպարանական սկզբունքներով: Յիմնականում առաջնորդվել ենք պատմաբնական, համեմատական, համադրական սկզբունքներով՝ փորձելով վեր հանել ուսումնասիրվող նյութի պատճառահետևանքային կապերը, խորքային առնչությունները:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՍ ՓՈՐՁԱՔՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Աստենախոսության մեջ արժարժված հիմնական խնդիրները, կարևոր դրույթներն ու եզրակացությունները լրսարանվել են ՀՀ գիտական տարրեր պարբերականներում ու ժողովածուներում:

Աստենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում:

Առանձին հարցեր նախացեն քննարկվել են արտերկրյա ճանագետների և համապատասխան ոլորտների գիտնականների հետ: Թեմայի շուրջ քննարկումներ են կազմակերպվել Գերմանիայի Յոհաննես Գուտենբերգի անվան համալսարանի թուրքագիտության ամբիոնում, որտեղ հետազոտական ծրագիր ենք իրականացրել 2008 թվականին:

Աղյուրագիտական (տեքստաբանական) բնույթի որոշ հարցեր քննարկվել են նաև թուրք օսմանագետ-դասախոսների հետ՝ աստենախոսի՝ Թուրքիա կատարած այցելությունների շրջանակներում:

## ԱՇԽԱՏԱՍՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աստենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորությը:

### ԱՊԱԶԻՆ ԳԼՈՒԽ

ԹԵՎԱԿԻՔ ՖԻՔՌԵԹ ԵՎ «ՍԵՐՎԵԹ-Ի ՖԱՌԻՆՈՒՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»  
/Ենթագլուխմեր 1.1-1.2/

#### 1.1 Թևակիք Ֆիքրեթի կյանքի ու ստեղծագործության առաջին շրջանը

Այս ենթագլուխ ներկայացվում է Ֆիքրեթի կենսագրության այն դրվագները, որոնք որոշիչ ազդեցություն են ունեցել գրողի գրական, մանկավարժական և խմբագրական գործունեության վրա:

Թուրքական պոեզիայի դասական թևակիք Ֆիքրեթը, իրական անունը՝ Մեհմեր Թևակիք, ծնվել է Ստամբուլի Աքսարիա քաղանասում՝ մեծահարուստի ընտանիքում: Թևակիք Ֆիքրեթն իր ժամանակի համար ստացել է լավ կրություն. սովորել է Աքսարիայի ոյութքին (Mahmudiye Rüştîyesi), այնուհետև ուսումն շարունակել Գալաթասարայի լիցեյում, որտեղ էլ հետազյում ծավալել է մանկավարժական գործունեություն: Ֆիքրեթը դասավանդել է նաև Որբերտ Քոլեջում:

Ժամանակակիցները նշում են, որ Ֆիքրեթն օժտված էր պարուրի մեջ զգացումի, նյութական ու բարոյական պատասխանատվության հատկացիներով:

Առաջին ստեղծագործությունները պոետը հրատարակում էր Թևակիք և Նեշիր գրական կեղծանուններով: Նրա բանաստեղծությունները տպագրվում էին տարբեր պարբերականներում, մասնավորապես «Mirsad» («Դիտորդ»), «Malumat» («Գիտելիք/իմացություն») հանդեսներում: Այս ենթագլուխ ամփոփում է բանաստեղծի ստեղծագործությունների առաջին շրջանը, որտեղ երկրի բարօրությունն ու առաջընթացը դեռևս կապվում էր «սուլթանի ու Ալլահի» հետ:

#### 1.2 «ՍԵՐՎԵԹ-Ի ՖՅՈՒՆՈՒՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՃԱՎՈՐՈՒՄԸ և առանձնահատկությունները

Այս ենթագլուխ ներկայացվում են «Սերվեթ-ի ֆյունում» պարբերականի ու համանուն գրականության առանձնահատկությունները: Լուսաբանվում են «Սերվեթ-ի ֆյունումին» նախորդող գրականության ընդհանուր գծերը,

ներկայացվում արդուլամիջյան վարչակարգի ու նրա կողմից հաստատված գրաբննության ազդեցությունը գրականության զարգացման վրա:

Արդուլ Համիդի թռնապետական վարչակարգը 19-րդ դարավերջի թուրքական հասարակության ամենահետադիմական խավերի տիրապետության արտահայտությունն էր: Այն Օսմանյան կայսրությունը վերստին հետ շարտեց դեպի թիրություն միջնադար: Դիտարկվող ժամանակահատվածում բանաստեղծի պոեզիայում ի հայտ են գալիս քաղաքացիական մոհիվներ, բողոք ընդենք արդուլամիջյան վարչակարգի, որոնք իրենց արտացոլումը գտան «Սերվեթ-ի ֆյունում» պարբերականի էջերում, որը 19-րդ դարի վեջքում նոր է քացեց թուրքական գրական մտքի ասպարեզում: Այն դարձավ ներկայացված ժամանակահատվածի լուսավոր կետերից՝ շնորհիվ նրա գլխավոր խմբագրի թափիք Ֆիքրեթի:

Անիածնու է նշել, որ 1980-90-ական թվականներին «Servet»-ը («Հարստություն») հրատարկվում էր որպես թերթ: Այն 1988 թվականին հիմնադրել էր ստամբուլցի հույն Դ. Նիկոլախիդսը: Սկզբնական շրջանում «Սերվեթ» իրենից հետաքրքրություն էր ներկայացնում որպես թուրքերենով լույս տեսնող առաջին երեկոյան թերթը Ստամբուլում:

1891-ի սկզբին Նիկոլախիդսն իր թերթի համար հավելված հրատարակելու թույլտվություն է ստանում, որը կոչվեց «Սերվեթ-ի ֆյունում» անունով: Նախ Նիկոլախիդսը հավելվածի հրատարակումը հանձնարարեց Միմեր Իհսան Թոքայողին, այնուհետև վերջինիս հանձնեց նաև լրացրի ճակատագրի տնօրինումը: Միմեր Իհսանին էլ իրավամբ կարելի է համարել «Սերվեթ-ի ֆյունում» լրագրի հիմնադիրը: Պարբերականի առաջին համարը լույս է տեսնում 1891 թվականի մարտի 17-ին:

Սկզբնական շրջանում պարբերականն ուներ գիտահանրամատչելի բնույթ: Տպագրվում էին տեղեկություններ հանրահայտ մարդկանց կյանքից, հողվածներ Արևմտաքում գիտության ու տեխնիկայի բնագավառում ունեցած ծերքերումների մասին, ինչպես նաև տնտեսագիտության ու բժշկության վերաբերող նյութեր: Մեծ տեղ էին գրալեցնում եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականությունից կատարված քարգմանությունները:

Այդ շրջանում թուրքական պարբերական մամուլի մեջ նորություն էր հանդիսանում «Սերվեթ-ի ֆյունումի» էջերում տեղ գտած պատկերագրումները, որոնց շնորհիվ էլ լուսավոր գրավեց պալատական վերնախավի ուշադրությունը:

1896 թվականին Թևակիք Ֆիքրեթը, որի բանաստեղծություններն արդեն մեծ ժողովրդականություն էին վայելում, իր ուսուցիչ Ռեզահզարեն Մահմութ Էքրեմի հրաբերով ստանձնում է «Սերվեթ-ի ֆյունումի» գլխավոր խմբագրի պաշտոնը: Այդ ժամանակից սկսած՝ լրացրում գերաշորդ են դառնում արևմտանու ուղղության հեղինակների գործերի հրապարակումները:

Ակսած 256-րդ համարից (1896 թվականի փետրվարի 7) «Սերվեթ-ի ֆյունում» ծեռք թերեց առավելապես գրական ուղղվածություն: Ֆիքրեթն անամբ հետևում և խմբագրում էր բոլոր ստեղծագործություններն ու հողվածները, վարում «գրական գրուցների» առանձին շարք, անգամ որոշ պատկերագրումներ հնքն էր անուն: Պարբերականի էջերում քարոզվում էին Արևմտաքանակ գործուական, դեմոկրատական» մշակույթի գաղափարները՝ ի հակադրություն

բուրքական ավատատիրական հասարակարգի գաղափարների և ավանդույթների:

Ֆիքրերը «Սերվեր-ի ֆյունունը» վերածեց գրական-գեղարվեստական հանդեսի, յուրօրինակ պայքարի միջոցի՝ հանուն բուրք գրականության արդիականացման: Այն դարձավ «արևմտականության» («ցարցուկ») ուղղության հիմնական գործիքը:

Այսպիսով, բուրք գրականության զարգացման գործում մեծ դեր ունեցան «Սերվեր-ի ֆյունունի» շուրջ համախմբված պուտներն ու արձակագիրները (Նիգար Հանիմ /Nigar Hanım/, Զալիհ Զիյա Ուչաքլըգիլ /Halit Ziya Uşaklıgil/, Խամահի Սաֆա /İsmail Safa/, Ալի Էքրեմ Բոլայր /Ali Ekrem Bolayır/ Շուտին Սուաթ Չալչըն /Hüseyin Suat Yalçın/, Զենափ Շահաբերին /Cenap Şahabettin/ Շուտին Զալչըն /Hüseyin Cahit Yalçın/ Սեհմեր Ռաուֆ /Mehmet Rauf/ և այլք), որոնց թղթած ժառանգությունը թուրք գրականության մեջ հիշատակվում է «Servet-i Fünun Edebiyatı» անունով. Ֆյունունականները եկան հաջորդելու քանզիմարականներին:

Թուրք գրականագիտության մեջ համեստում ենք նաև «Սերվեր-ի ֆյունունի գրականության» այլ անվանումների՝ «Edebiyat-ı Cedide», «Yeni Edebiyat-ı Cedide» /նոր գրականություն/ (վերջինս կիրառվում է գրաքննադատների կողմից «Սերվեր-ի ֆյունունի» գրական խմբակը Իրարակիմ Շիմասու, Խամըր Քենահի, Զիյա Փաշայի, Արդուկհար Ջամիլի, Ուշահիզադե Մահմուտ Էքրեմի ստեղծագործություններից առանձնացնելու համար:

Իրենց գրական ստեղծագործություններում «Սերվեր-ի ֆյունունի» գրողները քննադատում էին անբարոյականությունը, ֆանատիզմը, տղիտուրյունը, բուրքական հասարակության բարյական և սոցիալական արատունը: Չնայած գյուղություն ունեցող արգելվենքներին՝ պարբերականն իր ընթրցողությունին ծանոթացնում էր համաշխարհային դասական գրականության հետ: Թարգմանվում էին մասնավորապես ֆրանսիական գրականության դասականների գործերը:

«Սերվեր-ի ֆյունունի» էջերում իր տեղն է գտել նաև կանանց իրավունքների հարցը: Թուրք հայտնի գրականգետ Քենան Արյուզը նշում է, որ «Սերվեր-ի ֆյունունի» ժամանակաշրջանը բավականին լայն և ընդգրկուն ձևով է անդրադարձել կանանց խնդիրներին: «Սերվեր-ի ֆյունունի» բանաստեղծություններում, վեճերում և ախեններում աչք էր զարնում կնոց «քաղաքացիական իրավունքի» (medenî hak) տիտուր պատկերը<sup>13</sup>: «Ազգը, որը կրթության չի տալիս իր աղջկներին, զավակներին դատապարտում է հոգևոր որբության» («Kızılarını okuttmayan millet, oğullarını ma'nevî öksüzlüğe mahkûm etmiş demektir»), - հետագայում գրում է Ֆիքրերը<sup>14</sup>:

Պետք է նշել, որ սերվերի ֆյունունականները հաճախ իրաժարվում էին քանզիմարականների կողմից առաջ քաշած «ինչպի ժողովուրդ» («halka doğru»), «լեզվի պարզեցման» («sadeleşme») սկզբունքների կիրառումից<sup>15</sup>:

«Սերվեր-ի ֆյունունում» տպագրվում էին արվեստի և գրականության տեսական հարցերը լուսաբանող աշխատանքներ: Պարբերականի բազմաթիվ հոդվածներ նվիրված էին պոեզիայի հիմնադրամն հարցադրումներին:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵԹԻ «ԿՈՏՐՎԱԾ ՔԱՆՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Այս գլուխը նվիրված է Թաֆիք Ֆիքրեթի «Կոտրված քնար» գրում ամփոփված բանաստեղծությունների թեմատիկ, ժամանակ, լեզվաոճական առանձնահատկությունների քննությանը:

1900 թվականին առաջին անգամ լույս տեսավ Թաֆիք Ֆիքրեթի «Կոտրված քնար» («Rübab-ı Şikeste») ժողովածուն, որտեղ հիմնականում ընդգրկվեցին «Սերվեր-ի ֆյունունում» տպագրված ստեղծագործությունները: Այս ժողովածուի այլաբանական անվանումը լիովին համապատասխանում է նրա բովանդակությանը: Բանաստեղծությունների հիմքում ընկած են հետևյալ մոտիվները՝ պուտի բախսու հոգին, երիտասարդ տարիններին չիրականացված երազանքները, պայծառ ապագայի նկատմամբ կործանված հույսերն ու անսպառ հուսահատությունը: 1900-ի փետրվարին վաճառքի հանված գիրքը կարծ ժամանակահատվածում սպառվեց և մեկ ամիս անց կրկին հրատարակվեց: Ժողովածուն մի քանի անգամ ևս վերահրատարակվել ու լրացվել է երիտրուրքական հետաշրջումից հետո:

Ֆիքրերը թուրք և արտասահմանյան գրականագետների կողմից գնահատվել է որպես բանաստեղծական կանոնների համեմատ ծայրահեռ պահանջկուտ բանաստեղծի: Ինչպես նկատում է թուրք ուսումնասիրող Խամահի Փարլարը, Թաֆիք Ֆիքրեթը բանաստեղծության կառուցվածքի հարցում շատ խստապահանջ է եղել նա բանաստեղծական տեխնիկայի տարրերը գգուշորեն ընտրելու ու կիրառելու մեջ զանթեր է գործադրել<sup>16</sup>:

Լեզվի հարցերին Թաֆիք Ֆիքրեթը մոտենում էր ոչ միայն բարձրարվեստ պոեզիա ստեղծելու, այլև թուրք գրական լեզվի զարգացման առաջընթացն ապահովելու տեսանկյունից: Թե՛ գրականությանը, թե՛ գրական լեզվին առնչվող հարցերում մշտապես արտահայտվել են Ֆիքրեթի որոնող միտքը, կատարյալին հասնելու ծգոտումը: Ֆիքրեթը ոհմ էր արտահայտվում լեզվի քերականական կառուցվածքը խախտելուն:

Այս գլխում ներկայացվում են Ֆիքրեթի այն ստեղծագործությունները, որոնք վերաբերում են բանաստեղծի «Ես»-ի աշխարհընկալման, կարեկցանքի ու գրության, արվեստի, հողետևության, երևակայության, սիրո, բնության, որդու՝ Հալուքի թեմաներին:

<sup>13</sup> Տե՛ս Akyüz Kenan, Tevfik Fikret, Ankara, 1947, s. 284.

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 285:

<sup>15</sup> Տե՛ս Kabaklı A., Türk Edebiyatı, cilt 1, Türkiye Yayınevi, 1965, s.248.

## Ֆիքրեթի «Ես»-ի աշխարհոնկայլման թեման

«Sahayif-i Hayatımdan» («Կյանքիս էջեր») բանաստեղծության մեջ Թևֆիք Ֆիքրեթը խոսում է ծշմարտությունից խուսափելու, փախչելու մասին:

Ուշարձան է երկխոսությամբ գրված «Սուհա և Փերվին» («Süha ve Pervin») ստեղծագործությունը, որտեղ Սուհայի բնավորությունն ու էռթյունը հնչ-որ իմաստով արտացոլում են ինց բանաստեղծի մերաշխարհը: Որպես «երերային էռթյուն» բնութագրվող Սուհան, գեղեցիկ լինելով հանդերձ, նոյնական գործ է իր ապրած կյանքից, իրական աշխարհից և ձգտում է իր նոտացածին աշխարհն ունենալ: Ֆիքրեթը 1896-1900 թվականներին գրած ստեղծագործություններում սեփական «Ես»-ը նկարագրում է չափազանց տիտրը գույներով, տառապայլ ու հոռենտեսական ընկալումներով, ինչն էլ հետագայում դաշնում է նրա կենսակիլիսությունը:

## Կարեկցամբի, գրության թեման

1890-ական թվականների վերջին Թևֆիք Ֆիքրեթի պոեզիայում առասպելական ոգիների, հրեշտակների փոխարեն ի հայտ են զալիս հրական կերպարներ՝ ծկնորսներ, արհեստավորներ, մի խոսրով՝ հասարակ մահկանացուներ: Արանձնահատուկ ուշադրության է արժանի «Զկնորսներ» («Balıkçılar») բանաստեղծությունը, որտեղ առաջին անգամ բուրբական պոեզիայում հերոսները հասարակության ցածր խավի ներկայացուցիչներ են, հասարակ աշխատավոր մարդիկ: Մինչև Ֆիքրեթ նման հերոսներ բուրբական պոեզիայում առհասարակ չկային:

Քննադատելով կրոնական ծիսակատարությունների և գելս բարեթի «Երկրենսանի, պահպանողական, հետամնաց բնույթը»՝ բանաստեղծը գտնում է, որ ծառան, արհեստավորն ու աղքատը ևս օժտված են հարուստ ներաշխարհով:

Ֆիքրեթի պոեզիան, բինելով կյանքի ռժվարություններից ու տառապամբներից, ունի սոցիալական մեծ արժեք, ինչը պայմանավորված էր նաև մարդու հանդեպ ունեցած սիրով:

## Արվեստի թեման

Թևֆիք Ֆիքրեթը թուրք գրականության մեջ առաջինն էր, ով բացերաց խոսեց ու պնդեց գրականության՝ երկարատև, տրնաշան աշխատանքի արդյունք լինելու մասին: Ըստ նրա՝ ամենաարժեքավոր ստեղծագործությունները զգալի աշխատանքի արդյունք են («Ինքս ինձ» («Kendi Kendime»)): «Լացող արձան» («Heykel-i giryas», «Լսի՛ր, հոգի՛ս» («Dinle, Ruhum») բանաստեղծություններում ևս բանաստեղծի տպավորությունը տիտրը, բախտոտ, տառապեցնող:

## Հոռենտեսության թեման

«Կոտրված քնար» ժողովածուի մեջ շատ են հոռենտեսություն արտահայտող բանաստեղծությունները: Գրողն արտահայտում է իրեն

համակած խորը մելամաղձությունը, որը «մահից անգամ սարսափելի» է: Բանաստեղծը ողբում է իր կորցրած երիտասարդ տարիները և կյանքը նմանցնում «անվերջանալի մի մութ գիշերվա» («Մելախուլիա» («İktirâb»), «Կյանքի հանգույցը» («Ükde-i hayat») և այլն):

## Երևակայության թեման

Եշմարտությունից վախեցող և կյանքին վերին աստիճան հոռենտեսական վերաբերմունք ունեցող Ֆիքրեթը իր փրկությունը փորձում է գտնել արվեստի, սիրու և երազանքներին մեջ: «Ի՞նչ կուզեն» («Ne isterim?»), «Կանաչ հայրենիք» («Yeşil Yurt»), «Երազած/հորինված կյանք» («Ömr-i Mihayyel») բանաստեղծություններում Ֆիքրեթը պատկերում է իր երազների միջավայրը՝ «վարդի թիերի», «կանաչ լճերի», «ոգեշնչում հալորդող մաքրության» մեջ:

Յատկանշական է, որ Ֆիքրեթը կյանքին վերջին տարիներին փորձեց իր ստեղծագործություններում նկարագրած երազանքների միջավայրը գտնել 1905 թվականին Բոսֆորի ափին՝ սոսիների պուրակում, կառուցած իր առանձնատանը՝ «Աշիան»-ում:

## Միրու թեման

«Կոտրված քնար» ժողովածուի մեջ սիրու թեմայով գրված բանաստեղծությունների մեջ մասը նվիրված են Ֆիքրեթի կնոջը («Միհասին» («Bırlikte»), «Եթե դու չլինես» («Sen olmasan»)), որոնցում երևում է պյուտի և կնոջ միջև եղած սերտ կապը, իսկ բանաստեղծություններից մյուս մասը՝ պատմում է պյուտի կարճատև սիրային արկածների մասին («Չեծանիկ» («Bisiklet»)):

## Բնության թեման

Թուրքական ամսագրերում նկարների և լուսանկարների տպագրումը պատճառ դարձավ նկարների տուկ բանաստեղծություն գրելու նորաձևության ծնունդ առնելուն: Ֆիքրեթը նույնական հետևեց այս նորաձևությանը: Այստեղ պետք է հաշվի առնել Ֆիքրեթի՝ «Նկարիչ-պյուտ» («ressam-sair») լինելու հանգամանքը: Արհասարակ Ֆիքրեթի բանաստեղծություններից շատերում առկա են ջրի հետ կապված պատկերներ՝ գետ, ծով, լիճ, ջրվեժ, անձրև և այլն:

Ֆիքրեթի ստեղծագործություններից շատերում հանդիպում ենք տարվա եղանակների, անգամ ամիսների ուրույն նկարագրությունների, նկարազդումների (հիշարժան են «Անձրև» («Yağmur»), «Մի առավտու էր» («Bir Sabâh idî»), «Կապույտ ծով» («Mâî Deniz»), «Ամիսների փունջ» («Aveng-i Şühâr») բանաստեղծությունները).

Sâf u râkid...Hani akşamki tagayyür, heyecân?  
Bir çocuk rûhu kadar pür-isyân,

Bir çocuk rühu kadar şimdi münevver, lekesiz,  
Uuyor mây deniz<sup>17</sup>.

### «Mâî Deniz»

Şenlülər ni həmənəwarı... Ni őr ən ərəkənəyəni  
Şih mənlikəni həqiqi şəhər i mənəyəni  
Şih mənlikəni həqiqi şəhər i həmənəyəni  
Şəhərin ə öndər կապույտ:

### «Կապույտ ծով»

#### Որոր՝ Հայութի թեման

«Կոտրված քնար» ժողովածոլի մեջ մեծ տեղ ən զբաղեցնում հեղինակի որդում՝ Հալուքին, նվիրված բանաստեղծությունները («Հայութի համար» («Haluk İçin»), «Հալուք տոնը» («Haluk'un Bayramı»), «Վաղը» («Yarın») և այլն): Ֆիքրեթի կյանքում և աշխարհընկալման մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայութը, որին նվիրված մի ամբողջ ժողովածոլ է հետագայում հրատարակվում՝ «Հայութի տետրը» անունով:

Այս գիտում առանձին վերլուծության ən ներարկվել «Մառախուլ», «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունները և «Հին պատմություն» պեճմը: 1905-1906 թվականները բնութագրվում ən որպես Օսմանյան կայսրությունում ընդդիմադիր շարժման վերելի տարիներ՝ ընդդեմ Արդուլ Համիդի բանապետության: Օսմանյան կայսրությունում տիրող հեղափոխական մրնուրություն մեծապես ազդեց նաև արդուլիամիոյան վարչակարգից առանց այդ էլ հիասթափված Թևֆիք Ֆիքրեթի ստեղծագործական ուղու վրա: Ինչպես նշում է Սարիհա Սերբելը, Ֆիքրեթը երկրի բարեկեցությունն ամենից առաջ տեսնում էր սուլթանության անկման մեջ, և ինչպես մի խռովար՝ բռնապետության «ամենահումկու դարաշրջանում խիզախություն է ցուցաբերում՝ բանաստեղծություններ գրելով փաղիշահի նեմ»<sup>18</sup>:

#### «Մառախուլ» բանաստեղծությունը

«Մառախուլ» («Sis») բանաստեղծությամբ բուրք գրականության մեջ Ստամբուլն առաջին անգամ է ներկայացվում որպես այդաստիճան գարշելի, զարդելի ու անիջալ քաղաք: «Մառախուլը» կարծես թե նսեմացնում է Ստամբուլի՝ Արևմուտքի և Արևելքի մշտական գրավիչ քաղաքի անցյալի պատմական արժեքները, անգամ սրբավայրերն ու քաղաքում ապրող

մարդկանց: Մառախուլը, որը պատել է Ստամբուլը, արդուլիամիոյան վարչակարգն է, որը պատճառ է դարձել հոգևոր կյանքի անկման, ծայրահեղ աղքատության:

Բանաստեղծության մեջ գերիշխում ən սոցիալական մոտիվները, իշխող տարրերն ən «նողկանքը/ատելությունը» («pufret») և «ամեծքը» («lânet»): Ստամբուլը պետմա ատելության ուժին ցասումով համեմատում է անառակ, անքարոյական կողո կերպար հետ:

Բանաստեղծության վերջին հատվածում հեղինակը ներկայացնում է քաղաքի անկման դրապատճառները: Ֆիքրեթը նեղավոր է ճամաչում հոգին պլոտոր, բարյականությունը կորցրած մարդկանց: Ֆիքրեթը նկարագրում է Ստամբուլում ապրող մարդկանց կյանքը, նրանց վարքութարքը, քաղաքում տիրող քաղաքական-սոցիալական իրավիճակը: Քաղաքի զինվորական ու մտավորական խավը քաղաքականապես դատապարտված է, երիտասարդությունը անհոգ է, երեխաները՝ ամրան ու անսպասառն: Ֆիքրեթը մեծ ցավ է ապրում, որ ազգի զավակները նման իրավիճակում ən հայտնվել:

Ահա՝ այս անձայրածիր խավարի ու գարշանքի համապատկերը ծածկում է ատելությամբ ու անեծքով լի մառախուլը.

Örtün, evet ey hâile... örtün, evet ey şehir  
Örtün ve müebedde ayu, ey fâcire-i dehr!..<sup>19</sup>

Ծածկվի՛ր, այո՛, հե՛յ ողբերգություն...ծածկվի՛ր, այո՛, հե՛յ քաղաք,  
Ծածկվի՛ր և անվերջանալի քու՛ն մտիր, հե՛յ, համաշխարհայի՛ն պոռնիկ:

#### «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը

«Հապաղման մի ակնթարթ» (Bir Lâhza-i Te'ahhüt) բանաստեղծությունը 1905 թվականի հուլիսի 21-ին Արդուլ Համիդի դեմ իրականացրած անհաջող մահափորձի մասին է: Բանաստեղծը ժողովրդավարական կարգերին անցնելու համար բավական էր համարում դաժան փաղիշահի մահը: Ըստ Թևֆիք Ֆիքրեթի, եթե մահափորձը հասներ իր նպատակին, ապա կվերանային Օսմանյան կայսրության զարգացման արգելքները, և ազգերը կարթնանային սարսափելի քնից: Ֆիքրեթը ողջունում է մահափորձի զաղափարը՝ այն իրականացնողին անվանելով «փառապանծ որսորդ»: Այս բանաստեղծությունը խիստ քննադատության է արժանացել բուրք պատմաքանների և գրականագետների կողմից: Թուրք հեղինակների համար միանգամայն անընդունելի և դատապարտելի է եղել այն, որ Ֆիքրեթը ծագումով հայ վրիժառուին անվանել է «փառապանծ որսորդ» (շանլı avci):

<sup>17</sup> Fikret Tevfik, Rübəb-i Şikeste, Mâî Deniz, s. 204.

<sup>18</sup> Sertel Sabiha, Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi, İstanbul, 1946, s. 26.

<sup>19</sup> Fikret Tevfik, Rübəb-i Şikeste, Sis, ss. 297, 299.

## «Հին պատմություն» պոեմը

«Հին պատմություն» («Tarih-i Kadîm») պոեմն իրենից հետաքրքրություն է ներկայացնում նախ և առաջ հեղինակի փիլիսոփայական հայացքների արտացոլման տեսանկյունից և արժեքներում է նաև նրանով, որ համամարդկային պատմության ու արժեքներին յուրօրինակ անդրադարձ է<sup>20</sup>: «Պոեմը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին մասում խոսվում է մարդկության պատմության, նրա անցյալի ու ապագայի մասին, իսկ երկրորդ մասում՝ շշափում են կրոնին առնչվող հարցեր:»

Ֆիքրերը քննադառում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը, բռնությունն ու կեղեցումը՝ դրանք համարելով մարդկության արժանապատվության դեմ ուղղված գործողությունները:

Doğruluk dilde yok, dudaklarda;  
Hayır ayaklılarda, şer kucaklırlarda;  
Bir hakikat: Hakikat-ı zencir;  
Bir belâgat: Belâgat-ı şemşir;  
Hak kavînin, demek şerîrindir;  
En celî hikmet: Ezmeyen ezilir,  
Her şeref yapma, her saâdet piç;  
Her şeyin ibtidâsı, âhiri hiç...

Din şehit ister, assüman-kurban.  
Her zaman, her terafa kan, kan, kan<sup>21</sup>.

Ծշմարտությունը լեզվում չէ, այլ շրբունքներին,  
Բարին սուքերի տակ է, չարը՝ ծեռքերի վրա,  
Մի ծշմարտություն կա՝ կապանքների ծշմարտություն,  
Մի ծարտասանություն կա՝ սրի լեզու,  
Իրավունք ուժեղինն է, այսինքն՝ չարինը,  
Ամենապարզ փիլիսոփայությունն է. չկեղեցող կեղերվում է,  
Ամեն արժանապատվություն կեղծ է, ամեն երշանկություն՝ թերի,  
Ամեն բանի սկիզբը, վերջը ոչինչ է...

Դավատքը շեհիդներ է պահանջում, երկինքը՝ զոհեր:  
Միշտ և ամենուրեք՝ արյուն, արյուն, արյուն:

Ֆիքրերը, մերկացնելով իր հայրենիքում տիրող իրավիճակը, միաժամանակ հավատում է գալիքին, որն իր հետ լուսավոր օրեր է բերելու:

<sup>20</sup> Խոսելով Թևքիք Ֆիքրերի «Հին պատմություն» պոեմի մասին՝ Սուստաֆա Քեմալ-Արաբուրը այն համարել է «աշխարհում իրականացվող բոլոր հեղափոխությունների/բարեփոխումների աղբյուրը». տե՛ս Karaalioğlu Seyit Kemal, Kapak /Resimleyen A.Galip Batu, İsmail Tunç, Türk Edebiyatı Tarihi – 2, Tanzimatattan Cumhuriyete, İnkılâp Kitabevi, İstanbul 1982, s.623:

<sup>21</sup> Fikret Tevfik, Rûbâb-ı Şikeste, Tarih-i Kadîm, s. 431.

Քնարերգուն «Հին պատմություն» պոեմում հանդես է գալիս կրոնական դոգմաների դեմ և առաջ քաշում կասկածի դրույթը:

Հոգևորականությունը մերժողական վերաբերմունք է արտահայտել «Հին պատմություն» պոեմի հանդեպ՝ հեղինակին անվանելով «անաստված», «կրոնի թշնամի»:

1914 թվականին Ֆիքրերը գրում է «Հին պատմության հավելված» («Tarih-i Kadîm’e Zeyl») բանաստեղծությունը՝ ուղղված առհասարակ կրոնական պահապանողականների դեմ: Ըստ բանաստեղծի՝ մարդն ինքն է իր համար պաշտամունքի առարկաներ ստեղծում: «Եշմարիտ կրոնը, իմ կարծիքով, այսոր կյանքի կրոնն է», - գրում է Ֆիքրերը:

## ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԵՐԻՏԱՌԻԹԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋԱՍԱ ԱԶԻԹԵՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԿԱԻՔ ՖԻՔՐԵԹԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ  
/Ենթագլուխներ 3.1.- 3.3./

### 3.1. Երիտրուրքական հեղաշրջան արտացոյումը Թևքիք Ֆիքրերի ստեղծագործություններում

Երիտրուրքերը դեռևս մինչև հեղաշրջումը խոսում էին երկրի բոլոր ժողովուրդների եղբայրության, բարեկանության, նրանց շահերի ընդհանրության մասին: Այս դրույթների վրա էր հիմնված նաև Թևքիք Ֆիքրերի պոեզիան: Ուստի և պատահական չէր, որ Ֆիքրերը մեծ հորյութ էր կապում «հեղափոխության» հաղթանակի հետ, որոնք, իհարկե, չարդարացն:

Այս ենթագլուխ ներկայացվում են Ֆիքրերի գործունեությունը, գաղափարական դիրքորոշումներն ու հայացքները Երիտրուրքական իշխանությունների օրոք, ինչպես նաև Երիտրուրքական հեղաշրջան ազդեցությամբ գրված ստեղծագործությունները («Ազգի Երգը» («Millət Şarkısı»), «Հայրենիքի Երգը» («Vatan Şarkısı»), «Վերադարձ» («Rüçənə») և այլն): Ըստ Ֆիքրերի՝ Երկրում ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է «միավորվել ազգովի»:

Հեղափոխությունից անմիջապես հետո Թևքիք Ֆիքրերը բոլոր գրող, թարգմանիչ ու խմբագիր Յուսեյն Զահիդի հետ միասին ձեռնամուխ Եղավ «Tanîn» (արծագանք, դողանջ, աղմուկ, ահազանգ) թերթի հրատարակման գործին:

Թևքիք Ֆիքրերը կարծում էր, որ Երկիրն աղոթեն փրկված է չարիքից: Բանաստեղծը պահպանում և ընդգծում է հորյութ գալիքի Ակատմամբ: Հիասթափված քաղաքական խարդավանքներից՝ նա, այնուամենայնիվ, հավատում է երկրի կենսական հիմքերի վերածնությանը: Թևքիք Ֆիքրերը

կարծում էր, որ «հեղափոխություն» իր հետ ազատություն էր բերելու, ինչն էլ իր հերթին «մոր մարդկության», «նոր ու մաքուր սերնդի» հիմք էր դառնալու<sup>22</sup>:

### 3.2. «Դալուքի տետր» ժողովածու

Թևակիք Ֆիքրեթը մեծ հույսեր էր կապում երիտասարդ սերնդի հետ, պնդում, որ վերջինս միշտ էլ աչքի է ընկնում իր այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են եռամդր, լավատեսություն, դեպի նորը հակվածությունը, լավագույն պայագայի նկատմամբ համոզվածությունը: Ունենալով բավարար ինտելեկտուալ ու ստեղծագործական ներուժ՝ երիտասարդությունն ունակ է ներդնել նոր գաղափարներ, ավելի նախաձեռնող է, հակված է նոր ապրելակերպի, պահպանողականության ու լացման հակառակորդն է:

1911 թվականին տպագրված «Դալուքի տետրը» («Halâk’ün Defteri») ժողովածուի մեջ Ֆիքրեթը զետեղեց իր ամենադեմոկրատական և լավատեսությամբ լեցուն բանաստեղծությունները, որոնցում հայրենիքի երջանիկ ու փայլուն պայագայի և ճակատագրի նկատմամբ բանաստեղծն արտահայտել է իր պայծառ տրամադրությունները (հիշարժան են «Դալուքի հավատամքը» («Halâk’ün Âmentü’sü») «Դալուքի հրաժեշտը» («Halâk’ün Vedâ’ı») «Ծագող արկն» («Doğan güneş’e»), «Վաղը» («Ferdâ») բանաստեղծությունները).

Koşan elbet varır; düşen kalkar;  
Kara taştan su damla damla akar,  
Birikir, sonra bir gümüş göl olur;  
Arayan hakkı en sonunda bulur...<sup>23</sup>

#### **«Halâk’ün Vedâ’ı»**

Վաղողը, իհարկե, հասնում է, ընկնողը՝ վեր ելնում.  
Սև քարից ջուրը կարիլ-կարիլ հոսում է,  
Դավարկում, հետո մի արժաքելիք է դառնում,  
Փնտրողը ծշմարտությունն ամենավերջում է գտնում:

#### **«Դալուքի հրաժեշտը»**

Բանաստեղծ ու մանկավարժ Թևակիք Ֆիքրեթը իր ստեղծագործություններով փորձում է դաստիարակել առողջ մտածելակերպ ունեցող սերունդ, որը կարողանա կյանքի կոչել ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիկ ապրելու իր իրավունքը և որակական նոր մակարդակում վերարտադրել նախորդ սերունդների ժառանգությունը: Ֆիքրեթը պատմության նոր

ժամանակաշրջանի բացումը, հայրենիքի հույսն ու ապագան կապում է երիտասարդության հետ, որի պատվի գործն է վերափոխել կյանքը՝ գգուշացնելով, որ ապագան այսօրվանից է հաշիվ պահանջելու:

Բանաստեղծը, իրաժարվելով ավանդապաշտությունից, զարգացնում է աշխարհաքաղաքացիության գաղափարները և գրում, որ որպես հայրենիք պետք է ընդունել ամբողջ երկրագումնդը, քանի որ այս հայրենիք է համայն մարդկության համար՝ անկախ ազգային պատկանելությունից: Այս առումով ուշարժան են բանաստեղծի հետևյալ խոսքերը. «Երկրագումնդը հայրենիքս է, մարդկային ցեղը՝ ազգս» («Toprak vatanım, nev’-i ხեց մilletim...»): Զախ հայացքների տեր բուրք գրող-հրապարակախոս Սարիհա Սերբելը գրում էր, որ Ֆիքրեթին այս խոսքերի համար մերադրել են հայրենամերժության մեջ, նրան որակել են որպես «անհայրենիք»<sup>24</sup>: Ֆիքրեթի նման արտահայտություններն ընկալվել են նոյնիսկ որպես անարխիայի տարածնան վտանգ: Սերբելը նկատում էր, որ Ֆիքրեթի համաշխարհային հանրության գաղափարը, համածայն որի երկիրը ճանաչվում է որպես համընդիմուր հայրենիք, իսկ բոլոր մարդիկ՝ որպես եղբայրներ, իրականում ոչ թե հայրենամերժություն էր, այլ մարդկային բարձրագույն կատարելության մարմնացում<sup>25</sup>:

«Դալուքի տետրը» գրքում «Կոտրված քնարի» հեղինակի նախկին հոգեվիճակն ու աշխարհայացքը լիովին փոխվել են: Այս տարիներին Ֆիքրեթն իրեն կեղեքող միայնության գացառվել ու միացել էր հասարակության սոցիալական ամենաաշխատյաց շերտը հանդիսացող երիտասարդությանը:

### 3.3. Թևակիք Ֆիքրեթի ստեղծագործությունների վերջին շրջանը

Որքան էլ Ֆիքրեթը տոգորված լիներ հեղափոխական գաղափարներով, այնուամենայնիվ, նրա հույսերը չարդարացան: Սահմանադրության վերականգնումից հետո երիտրությական ուկավարմերը բույլ չտվեցին, որ հեղափոխական պայքարը հետագայում ծավալվի միապետության դեմ: Հասարակական հավասարություն խոստացած երիտրություն իրենց խոստումն իրականացնելու փոխարեն ունահարեցին կայսրությունում ապրող ժողովուրդների իրավունքները՝ «մնուանալով» ազատության, հավասարության և երայիտրյան մասին: Իրենց առօս չդնելով նշանակալի սոցիալական բարեփոխումներ իրականացնելու խնդիր, հանդես գալով ժողովրդական զանգվածների սոցիալական ծգտումների դեմ՝ երիտրություն արագ կորցրին հեղաշրջման արդյունքում ծեղը բերած ժողովրդականությունն ու հեղինակությունը: Թուրքիայի առաջանա մարդիկ, այդ բվում և Թևակիք Ֆիքրեթը հասկացան, որ երիտրությունը խարել են իրենց: Ֆիքրեթը վերջնականապես համոզվեց, որ այլևս չի կարող ստանձնել «Թանին» թերթի խմբագրությունը և արհասարակ համագործակցել երկիր նոր քաղաքական դեկավորության հետ, հեռացավ խմբագրությունից: Սակայն նրա հեղինակությունը բավականին մեծ էր, և թեև երիտրությունը փորձում էին այդ հանգամանքն օգտագործել ի շահ իրենց, նրան

<sup>22</sup> Տե՛ս Tanrınar Ahmet Hamdi, Tevfik Fikret, Hayatı, Şahsiyeti, Şiir ve Eserlerinden parçalar, İstanbul, 1944, s. 15.

<sup>23</sup> Fikret Tevfik, Halâk’ün Defteri, Halâk’ün Vedâ’ı, ss. 41-42.

<sup>24</sup> Տե՛ս Sertel Sabiha, նշվ. աշխ., էջ 101.

<sup>25</sup> Տե՛ս նոյն տեղում:

առաջարկում են տարբեր բարձր պաշտոններ, փորձում լրեցնել պրեսի ծայնը, միևնույն է, Ֆիքրեթը շարունակում էր ըմբռստանալ, պայքարել ու ստեղծագործել:

«Հայութի տետրը» ժողովածուի մեջ «հեղափոխության ծափահարող» և ապագային հիւյսով նայող Ֆիքրեթը կրկին հոռեսնության գիրկն է ընկնում («Դեպի հնասունինք/հնասունինքի վերադարձ») («Doksan Beşinci Doğru»), «Գողացած ճաշի սեղան» («Hân-i Yağma») և այլն):

Ֆիքրեթը խոսում է սոցիալական թեմաներին կարևորություն տալու անհրաժեշտության մասին: Զայռութով ու ատելիությամբ լցված Ֆիքրեթը գրում է, որ իշխանավորները, աթոռակորիվ տալով, մոռացել են ազգի, ազատության, օրենքի ու խորհի մասին:

## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵԹԸ ՍԱՍԿԱԳԻՐ. «ՇԵՐՄԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Թեֆիք Ֆիքրեթի մահից մեկ տարի առաջ՝ 1914 թվականին, հրատարակվեց նոր «Շերմին» մանկական բանաստեղծությունների ժողովածուն, որի բանաստեղծական լեզուն բավական պարզ է, մատչելի ու անաղարտ: Բանաստեղծությունները պատմում են երեխայի զգացմունքների և աշխարհընկալման մասին: Այստեղ երեխան սկսում է շփվել իրականության հետ, փորձում ճանաչել աշխարհը, գտնել բազմաթիվ «ինչունների» պատասխաններ: Ֆիքրեթը լավ էր գիտակցում, որ երեխանների հասունացման, իմացական շրջանակների ընդլայնման, մանկան ունակությունների մշակման գործում կողմնորոշչ դեր է խաղում մանկական գրականությունը, առաջին օգնականներից ու խորիդրատուններից պետք է դառնա գիրքը, օգնի՝ երեխային ճանաչելու գեղեցիկն ու լուսավորը, բարին ու չարը:

Պետք է նշել, որ, եթե այս ժողովածուի ստեղծագործություններն եապես տարբերվում են նախորդ՝ «Հայութի տետրը» ժողովածուի ստեղծագործություններից լեզվով ու տարրաչափությամբ, ապա գաղափարական տեսանկյունից դրանք շատ մոտ են մինյանց, խաչվում են «նոր մարդու տեսակի» («yenî insan tipi») դաստիարակման գաղափարին:

Ֆիքրեթը երազում էր իմաննել «Yeni Mekter» («Նոր դպրոց») անունով մի դպրոց: Սակայն չկարողանալով այս նպատակն իրականացնել՝ նա իր գաղափարներից շատերը փորձեց կյանքի կոչել Գալաքարարայի լիցեյում: «Yeni Mekter»-ի նպատակը երեխաններին գործնական կյանքին պատրաստելն էր: Ինչպես անգլ-սաքսոնական դպրոցներում, այնպես էլ այս դպրոցում մեծ տեղ էր տրվելու սպորտին ու ծերքի աշխատանքին: Այսինքն՝ «Yeni Mekter»-ը կոչված էր պատրաստել ոչ թե գիտնականներ ու տեսաբաններ, այլ պրագմատիկ, «կյանքի մարդիկ»: Այս «նոր մարդու տեսակի» կյանքում միատիկական զգացմունքների համար տեղ չէր մնալու: Վերջինիս տեղը գրավում է «կյանքի գիտելիքը» («hayat bilgisi»): «Շերմին» ժողովածուի մեջ տեղ գտած

բանաստեղվությունների մեծամասնության մեջ էլ իշխում են հենց այս գաղափարները:

Ֆիքրեթն իր գերխնդիրն էր համարում վաղ հասակից երեխային կյանքի դասեր տալը: Իր բանաստեղծություններում Ֆիքրեթը գրում է բնության, հայրեմիքի, ազգի, մարդկության հանդեպ սիրո ու հարգանքի մասին, խորհուրդ տալիս օգնել ծերերին, ընկերությունը կարուցել ողջ կյանքի համար՝ կիսելով ընկերոց հետ թե՛ ուրախությունն ու հաջողությունը, և թե՛ տիրությունն ու անհաջողությունը (իիշարժան են «Հյուսն» («Marangoz»), Բորո/Բոխուլ» («Umacı»), «Որբը» («Öksüz»), «Գարուն վարպետը» («Bahar Kalfa») բանաստեղծությունները):

Ֆիքրեթի համոզմաճը՝ նման խնդիրներ պետք է դրվեն երեխայի դաստիարակության հենց սկզբում՝ նախադպրոցական տարիքում: Ժողովածուում է տպագրվել թուրք մանկական գրականության, թերևս, ամենահայտնի բանաստեղծություններից մեկը՝ «Երիցուկ» («Papatya»).

Bahâr olsun da seyredin  
Nasıl süsler bayırları,  
Zümrüt gibi çayırları  
Yüze gülen o nâzenen  
Gelin yüzlü papatyalar.  
Altın gözlü papatyalar.

\* \* \*

Rüzgâr eser: Kâh ô yana,  
Kâh bu yana, hep beraber,  
Dalga dalga eğilirler;  
Ferah verirler insana  
Güler yüzlü papatyalar,  
Altın gözlü papatyalar.<sup>26</sup>

Գարուն թող գա, ու տեսե՛ք՝  
Ինչպես է զարդարում բլուրները,  
Զնորւխտի նման մարգագետինները.  
Երեխն ժամացող այն նրբագեղ  
Հարսի դեմքով երիցուկները,  
Ուկեաչ երիցուկները:

\* \* \*

Քամին փչում է. մեր այն կողմ,  
Մերը այս կողմ. բոլորը միասին,  
Ալեկոծվում, խոնարհվում են,  
Գորովանք են պարզում մարդուն  
Ժպտադեմ երիցուկները,  
Ուկեաչ երիցուկները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով օսմանյան դարաշրջանի թուրք գրականության ականավոր ներկայացուցիչ Թևֆիք Ֆիքրեթի պոեզիայի, ինչպես նաև «Սերվեր-ի ֆյունունի գրականության» վերլուծության արդյունքները՝ հաճգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Թևֆիք Ֆիքրեթը, որն սկզբնապես Օսմանյան կայսրության բարօրությունն ու առաջնքացը կապում էր «սուլթանի ու Ալլահի հետ», ցուցադրում ընդգծված լավատեսություն՝ հաճախ միտումնավոր շրջանցելով կյանքի դառնություններն ու դժվարությունները, իր երկերում աստիճանաբար անցում է կատարում դեպի սուր քննադատություն՝ ուղղված ամրողատիրական վարչակարգի դեմ: 1890-ականների վերջերից Թևֆիք Ֆիքրեթը քննադատությունը բնորոշվում է քաղաքացիական շնչով ու պարուսով, այնուհետև՝ համիլյան բռնապետական վարչակարգի դեմ ուղղված սուր քննադատությամբ («Կոտրված քնար» ժողովածուն):
2. Լինելով «Սերվեր-ի ֆյունունի» գրական շարժման պարագլուխն ու նրա ամենանշանավոր ներկայացուցիչը՝ Թևֆիք Ֆիքրեթը մյուս սերվերի ժամանունականների հետ միասին շրջվեց դեպի արևմտյան քաղաքակրությունը, հատկապես՝ ֆրանսիական դպրոցը, փորձեց յուրացնել գրական նոր ժամրեր ու ոճեր՝ չխուսափելով անգամ բռվանդակային կրկնօրինակումներից:
3. Թևֆիք Ֆիքրեթը հաճախ քննադատում էր «արվեստն արվեստի համար» սկզբունքը՝ գրականության ու արվեստին վերագրելով հասարակական մեջ նշանակություն:
4. Իր գրական համախոհների հետ միասին Թևֆիք Ֆիքրեթը ջանում էր նպաստ բերել թուրք նոր գրականության ստեղծմանը՝ այդ ընթացքում կարևորելով գրական լեզվի առաջնորդացը՝ հարազատ մնալով, սակայն, օսմաներենի կանոններին:
5. Թևֆիք Ֆիքրեթի պոեզիայում և հրապարակագրության մեջ առանձնահատուկ տեղ ունի կանանց կրության, իրավահավասարության հիմնահամուրաց:
6. Թուրքական անսագրերում նկարների ու լուսանկարների տակ բանաստեղծություն գրելու նախափորձերի համապատկերում Թևֆիք Ֆիքրեթի՝ որպես «նկարիչ-պոետի» («ressam-sair») բերած նորամուծություններից էր որպան՝ ավանդություն ուժ հաղորդելը:
7. Մինչև Թևֆիք Ֆիքրեթ՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաքը երթև չէր ենթարկվել այնպիսի հզոր քննադատության, որքան նրա պոեզիայում. առաջին անգամ թուրք գրականության մեջ, ամփոփելով քաղաքական խոր ալեգորիա (մառափուղ-արդուլիամիլյան վարչակարգ), Ստամբուլն անվանվում է «գարշելի, զարելի, անհծյալ քաղաք ու բռնության հրապարակ» («Սառախուղ» / («Sis»):
8. Կապված բռնատիրության տապալման անհրաժեշտության գիտակցության հետ՝ Թևֆիք Ֆիքրեթը սքովված համակրել է 1905-ի հուլիսի 21-ին Արդուլ Համիլի դեմ իրականացված անհաջող մահափորդ

կազմակերպած ազգությամբ հայ վրիժառուներին («Հապաղման մի ակնթարթ» / «Bir Lâhza-i Te'ahhur»): Դակառակ թուրք հեղինակների պնդումների, թե Ֆիքրեթի՝ վերոհիշյալ բանաստեղծության ծնունդը պայմանավորված է միայն արդուլիամիլյան բռնատիրական վարչակարգի հանդեպ ատելությամբ, և հեղինակը տեղյակ չի եղել անկախ պետություն ստեղծելու «հայերի մտադրություններից», պետք է նշել, որ Ֆիքրեթը մերժողական վերաբերմունք չի արտահայտել հայերի հանդեպ: Ավելին, նա հայ վրիժառուն կոչել է «փառապանծ որսորդ» և շանսալով ընդդիմախոսներին՝ բանաստեղծությունը ներառել է «Կոտրված քնար» գրքում:

9. Պատկառելի է Թևֆիք Ֆիքրեթի ներդրումը նաև թուրք քնարական պոեմի ժանրային հարստացման գործում («Հին պատմություն» / «Tarihi-i Kadim»). հեղինակը առաջ է քաջում կեցության փիլիսոփայության ծշմարտացիությունը: «Կրոն-բնություն, Աստված-մարդ» հակադրությունները Ֆիքրեթը զարգացնում է իր «հետսահմանադրական» ստեղծագործություններում:
10. Երիտրուբական հեղաշրջման օրերին Թևֆիք Ֆիքրեթը ողջունում է նոր ժամանակաշրջանի գալուստը, դառնում հեղափոխական բանաստեղծ: Նրա՝ «նախսահեղափոխական» և «հետհեղափոխական» երկերի միջև գործակերպ ցուցադրում է հեղինակի հոգեվիճակի ու աշխարհայացքի դրական փոփոխություններ («Հալուքի տետրը»), որոնք հետագայում, սակայն, տեղի են տալիս երիտրուբակի հռչակած կարգախոսների սնամնեցության առջև:
11. Թևֆիք Ֆիքրեթի մանկական պոեզիան իր լուսավոր գաղափարներով, ճանաչողական ու դաստիարակչական նշանակությամբ, ժանրային բազմազանությամբ բացառիկ երևույթ է առհասարակ թուրք գրականության մեջ («Շերմին» ժողովածուն):
12. Թևֆիք Ֆիքրեթի կողմից արդուլիամիլյան վարչակարգի քննադատությունը երիտրուբակին օգտագործել են քաղաքական նկատառումներով՝ հնարավորինս արդյունավետ այլափոխության ենթակելով: Իսկ արդեն հնարապետական թուրքիայում նրա ստեղծագործության պրոպագանդումն էաւաս պայմանավորված էր գրողի գաղափարներն Արարությի սկզբունքների (մասնավորապես՝ լաիցիզմի) հիմնավորման համար օգտագործելով:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱՄԱՐԱԿՎԱԾ ՀՈՂԿԱԾՆԵՐ

1. Պետրոսյան Տ., «Սերվեթի ֆյունուն» հանդեսի գաղափարական և լեզվաօճական առանձնահատկությունների շուրջ, «Սերծավլու Արևելք» հատոր V, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Լուսակն իրատ., Երևան, 2008, էջ 209-214:

2. Պետրոսյան Տ., Թևքիք Ֆիքրեթի «Հին պատմություն» պոեմի և նրա լեզվաօճական առանձնահատկությունների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների» (գլխ. Խմբագիր՝ պրոֆ. Ա. Խառապյան), ՀՀ ԳԱԱ, 3(626), ՀՀ ԳԱԱ իրատ., Երևան, 2009, էջ 269-273:

3. Պետրոսյան Տ., Թևքիք Ֆիքրեթի պոեզիայի որոշ առանձնահատկությունների շուրջ («Մառախուղ» բանաստեղծությունը), «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (գլխ. Խմբագիր՝ պրոֆ. Ռ. Սաֆրաստյան), հատորVI, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, 2009, էջ 323-330:

4. Պետրոսյան Տ., Երիտրուրքական հեղաշրջման արտացոլումը Թևքիք Ֆիքրեթի ստեղծագործություններում, «Համատեքստ-2009» (գլխ. Խմբագիր՝ պրոֆ. Դ. Էդոյան), ԵՊՀ, Երևան, 2010, էջ 189-195:

## ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՐՈՒԲԻԿՈՎԻՉ

### ԺИЗНЬ И ТВОРЧЕСТВО ТЕВФИКА ФИКРЕТА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07- "Зарубежная литература"

Защита состоится 26-го мая 2010 г.- в 13<sup>30</sup> на заседании действующего в ЕГУ профессионального совета 012.

Адрес: Ереван 25, Абовяна 52а, корпус факультета армянской филологии, кабинет 202.

### РЕЗЮМЕ

Диссертация посвящена анализу жизни и творческого пути классика турецкой литературы Тевфика Фикрета (1867-1915), творчество и педагогическая деятельность которого занимает особое место в эпоху, получившей в турецком литературоведении название "Литература Сервет-и фюнун" ("Servet-i Fünun Edebiyatı").

Работа состоит из Введения, четырех глав с соответствующими подглавами, Заключения и списка использованной литературы.

В Введении излагается история вопроса, определяются цели и задачи исследования, методологическая основа изучения материала, обосновывается актуальность темы и ее научная новизна.

В первой главе – "Тевфик Фикрет и "Литература Сервет-и фюнун" – представлены эпизоды из биографии Фикрета, имевшие определяющее влияние на литературную, педагогическую и редакторскую деятельность поэта. Обобщается первый этап творчества Фикрета.

Представлена история создания и раскрыта идеально-художественная платформа журнала "Сервет-и фюнун", а также дана общая характеристика творчества писателей, объединившихся вокруг этого литературного издания. В главе дается общая характеристика турецкой литературы до эпохи "Сервет-и фюнун", раскрывается негативное воздействие цензуры на развитие литературы в условиях режима "зулума" в Османской империи.

Вторая глава – "Сборник "Разбитая лягушка" – посвящена исследованию жанровых, лингво-стилистических и тематических особенностей стихотворений, опубликованных в указанном поэтическом сборнике Фикрета.

В третьей главе – "Влияние младотурецкого переворота на произведения Тевфика Фикрета" – представлена деятельность Фикрета, его идеологическая позиция, общественно-политические взгляды, а также поэтическое творчество в период правления младотурков. Анализируются стихотворения из сборника "Тетрадь Халюка", освещается эволюция общественно-политических взглядов Фикрета, связанная с разочарованием поэта в реальных результатах переворота.

В четвертой главе – "Тевфик Фикрет как детский писатель: сборник "Шермин" – делается попытка проследить педагогическую и публицистическую деятельность поэта, поднимающего вопросы воспитания и образования. Анализируются стихотворения, опубликованные в детском сборнике "Шермин".

В конце диссертации представлены выводы проведенного исследования.

## SUMMARY

The dissertation is dedicated to the analysis of life and creative path of the outstanding representative of Turkish literature **Tevfik Fikret** (1867-1915). Tevfik Fikret plays a unique and primary role in the era of Turkish literary criticism referred to as "Servet-i Fünun".

The dissertation consists of an introduction, four chapters with respective subheadings, conclusion and bibliography.

**The Introduction** briefly gives the history of the question under consideration; sets the aims and goals of the research, methodological foundation of the material study, and substantiates relevance of the topic and its academic novelty.

**Chapter one** – "Tevfik Fikret and the Literature of 'Servet-i Fünun'" - presents the episodes of Fikret's biography that had a decisive impact on the writer's literary, pedagogical and editorial experience. The first stage of the poet's works is summarized. "Servet-i Fünun" journal and characteristic features of literature bearing the same name are introduced. General features of the literature preceding "Servet-i Fünun" are elucidated; the impact on the development of literature by the censorship established by the administration of Abdul Hameed is presented.

**Chapter two** – Tevfik Fikret's Collection "The Broken Lyre" – is dedicated to the study of thematic, genre, linguistic, stylistic peculiarities of poems included in Fikret's above mentioned book.

**Chapter three** – The Influence of Young Turks' Coup on Tevfik Fikret's Literary Works" – introduces Fikret's activities, ideological positions and views during the rule of the Young Turks, as well as his poems written under the influence of the Young Turks' coup. Poems of the collection "Halouk's Notebook" are analyzed; the change in Fikret's views conditioned by the poet's disappointment in the results of the coup is examined.

**Chapter four** – Tevfik Fikret – the Children's Writer: Collection "Shermin" – involves an attempt to reveal uniqueness of Tevfik Fikret – the children's writer and the publicist and pedagogue raising issues of education and upbringing. The poems included in the children's collection of poems "Shermin" are analyzed.

The conclusions are presented at the end of the dissertation.

